ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	ՀՕ-78-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2008.06.25/39(629) Հոդ.627	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	26.05.2008
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	18.06.2008
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	05.07.2008	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի մայիսի 26-ին

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական պարտքի հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **պարտքային պարտավորություն՝** փոխառության (այդ թվում՝ ներքին և արտաքին շուկաներում տեղաբաշխվող արժեթղթերի) կամ վարկային պայմանագրով ստացված և որոշակի պահի դրությամբ չմարված գումար, ներառյալ՝ ժամկետում չմարված տոկոսագումարը, ինչպես նաև տրամադրված պետական երաշխիքների գումարը.

2) **պետական պարտք՝** Հայաստանի Հանրապետության անունից և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) անունից (բացառությամբ ռեզիդենտների հանդեպ Կենտրոնական բանկի առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.

3) **կառավարության պարտք՝** Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.

4) **Կենտրոնական բանկի պարտք՝** ոչ ռեզիդենտների, օտարերկրյա պետությունների առջև Կենտրոնական բանկի ստանձնած և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.

5) **ներքին պետական պարտք՝** Հայաստանի Հանրապետության անունից՝ կառավարության լիազոր մարմնի

կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների հանդեպ փոխառության կամ վարկային պայմանագրերի հիման վրա ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.

6) **արտաքին պետական պարտք՝** Հայաստանի Հանրապետության անունից և Կենտրոնական բանկի անունից Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.

7) **պետական երաշխիք՝** որոշակի պահի դրությամբ կառավարության պարտավորությունը (բյուջետային երաշխիքը) փոխատուների և վարկատուների առջև, ինչպես նաև Կենտրոնական բանկի պարտավորությունը ոչ ռեզիդենտ փոխատուների և վարկատուների առջև ամբողջությամբ կամ մասնակի մարելու՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ փոխառուների և վարկառուների կողմից վճարման ենթակա գումարները՝ սահմանված ժամկետներում նրանց կողմից չվճարվելու դեպքում.

8) **Հայաստանի Հանրապետության համախառն արտաքին պարտք՝** Հայաստանի Հանրապետության անունից, Կենտրոնական բանկի անունից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների կողմից ոչ ռեզիդենտների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հանդեպ ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը.

9) **պարտքի մարում՝** փոխառության կամ վարկային պայմանագրի հիման վրա պարտքային պարտավորության կատարում.

10) **պարտքի սպասարկում՝** փոխառության կամ վարկային պայմանագրով նախատեսված տոկոսագումարի, կոմիսիոն վճարի, տուժանքի և այլ վճարի կատարում.

11) **Հայաստանի Հանրապետության անունից՝** Հայաստանի Հանրապետության, կառավարության, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, պետական հիմնարկների անունից.

12) **լիազոր մարմին՝** պետական ֆինանսների կառավարման բնագավառում կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմին.

13) **ռեզիդենտ՝** ֆիզիկական անձինք, որոնք տվյալ տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ժամանակահատվածում գտնվել են Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև իրավաբանական անձինք, որոնք ստեղծվել և պետական գրանցում են ստացել Հայաստանի Հանրապետությունում.

14) **ոչ ռեզիդենտ՝** սույն օրենքի իմաստով ռեզիդենտ չհամարվող ֆիզիկական անձինք և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները.

15) **պետական զանձապետական պարտատոմս՝** Հայաստանի Հանրապետության անունից լիազոր մարմնի կողմից ազգային արժույթով թողարկվող պարտատոմսը.

16) **արտարժույթով թողարկվող պարտատոմս՝** Հայաստանի Հանրապետության անունից արտարժույթով թողարկվող պետական պարտատոմսը.

17) **պայմանագիր՝** Հայաստանի Հանրապետության անունից՝ Հայաստանի Հանրապետության, կառավարության, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, հիմնարկների կողմից կնքված փոխառության, վարկային և պետական երաշխիքի պայմանագիրը, համաձայնագիրը և Կենտրոնական բանկի կողմից կնքված արտաքին փոխառության, վարկային և պետական երաշխիքի պայմանագիրը, համաձայնագիրը.

18) **ընթացիկ պարտավորություն՝** որոշակի պահի դրությամբ փոխառության և վարկային պայմանագրերով առաջիկա 365 օրվա համար նախատեսված պարտքի մարումների և սպասարկման հանրագումարը.

19) **առաջնային տեղաբաշխում՝** թողարկողի կամ նրա հանձնարարությամբ այլ մարմնի կողմից որոշակի մեխանիզմով թողարկողի պարտատոմսերի առաջին օտարումը շուկայի մասնակիցներին.

20) **առաջնային շուկա՝** շուկա, որտեղ իրականացվում է պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումը:

Հոդված 3. Օրենքի նպատակը

1. Սույն օրենքի նպատակը պետական պարտքի կառավարման գործընթացի արդյունավետ և հրապարակային կազմակերպման ապահովումն է:

Հոդված 4. Պետական պարտքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Պետական պարտքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից, այլ նորմատիվ իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան սույն օրենքով, ապա գործում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 5. Պետական պարտքը

1. Պետական պարտքը կառավարության պարտքի և Կենտրոնական բանկի պարտքի հանրագումարն է:
2. Պետական պարտքը ստանձնվում է Հայաստանի Հանրապետության անունից՝ կառավարության, պետական մարմինների և պետական հիմնարկների կողմից և Կենտրոնական բանկի անունից՝ Կենտրոնական բանկի կողմից:
3. Պետական պարտքը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով:
4. Պետական պարտքը կարող է հրապարակվել նաև այլ արժույթներով:
5. Պետական պարտքի մարման և սպասարկման ենթակա գումարները վճարվում են ամբողջությամբ և ժամանակին: Եթե տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա պետական պարտքի մարման և սպասարկման ենթակա վճարումները կարող են իրականացվել առանց սահմանափակման՝ արտահայտվելով այդ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:
6. Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքի և Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի հարաբերակցության սահմանային շեմը 60 տոկոս է:
7. Եթե կառավարության պարտքը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցել է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 40 տոկոսը, ապա գործում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 8.2-րդ և 8.4-րդ մասերով սահմանված դրույթները:
8. ***(մասն ուժը կորցրել է 20.12.17 ՀՕ-6-Ն)***

(5-րդ հոդվածը փոփ. 23.06.15 ՀՕ-97-Ն, խմբ., փոփ. 20.12.17 ՀՕ-6-Ն)

Գ Լ Ո Ւ Խ II

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱԶՄԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հոդված 6. Պետական պարտքի կազմը

1. Պետական պարտքի բաղադրիչներն են ներքին պետական պարտքը, արտաքին պետական պարտքը և պետական երաշխիքները: Պետական պարտքի բաղադրիչներից բխող դրամական պարտավորություններն ունեն նույն գերակայությունը:
2. Պետական պարտքը, ըստ ժամկետայնության, լինում է կարճաժամկետ (մինչև 1 տարին ներառյալ), միջնաժամկետ (1-5 տարին ներառյալ) և երկարաժամկետ (5-ից ավելի տարով):

Հոդված 7. Պետական պարտքի ձևավորման գործիքակազմը

1. Պետական պարտքի ձևավորման գործիքներն են՝
1) ֆինանսական, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքված վարկային պայմանագրերը.
2) ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերը.
3) պետական գանձապետական և արտարժույթով թողարկված պարտատոմսերը.
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտքի փոխանցման գործարքի հետևանքով որպես պետական պարտք վերաձևակերպված երրորդ անձանց պարտավորությունները.
5) պետական պարտքի վերաձևակերպման պայմանագրերը.
6) պետական երաշխիքները:

Հոդված 8. Պետական պարտքի ներգրավման նպատակները

1. Պետական պարտքի ներգրավման նպատակներն են՝
1) պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը և ընթացիկ իրացվելիության ապահովումը.
2) վճարային հաշվեկշռի աջակցությունը և պահուստների համալրումը.
3) ներքին պետական պարտքի շուկայի պահպանումը և զարգացումը:

Գ Լ Ո Ւ Խ III

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 9. Պետական պարտքի կառավարման նպատակները

1. Պետական պարտքի կառավարումը գործընթաց է, որն իրականացվում է փոխառու միջոցների ներգրավման, վերաձևակերպման, մարման և սպասարկման ծրագրերի մշակման և իրականացման միջոցով՝ սույն հոդվածով սահմանված նպատակների շրջանակներում:

2. Կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակն է կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումը՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը:

3. Կառավարության պարտքի կառավարման նպատակներն են՝

1) կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը.

2) պետական պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականությունների համակարգումը:

4. Կենտրոնական բանկի պարտքի կառավարման նպատակները սահմանվում են Կենտրոնական բանկի մասին օրենքով:

5. Կառավարության պարտքի կառավարման նպատակների իրագործումն ապահովելու համար լիազոր մարմինը կիրառում է ֆինանսական շուկաներում ընդունված պարտքի կառավարման գործիքներ, այդ թվում՝ պարտքի վերաձևակերպում, վերակառուցում, հետգնում, փոխանակում, սվոփ և այլն:

Հոդված 10. Պետական պարտքի կառավարման սկզբունքները

1. Պետական պարտքի կառավարումն իրականացվում է թափանցիկության, հաշվետվողականության, կանխատեսելիության և հրապարակայնության սկզբունքներով:

Հոդված 11. Պետական պարտքը կառավարող մարմինները

1. Պետական պարտքի կառավարումն իրականացնում են լիազոր մարմինը և Կենտրոնական բանկը՝ իր պարտքի մասով:

2. Լիազոր մարմինը և Կենտրոնական բանկն իրականացնում են պետական պարտքի գրանցում, հաշվառում և պատասխանատու են այդ հաշվառման հավաստիության համար: Պետական պարտքի գրանցման և հաշվառման ձևերը սահմանում են լիազոր մարմինը և Կենտրոնական բանկը համատեղ:

3. Լիազոր մարմինը և Կենտրոնական բանկն իրավասու են վաղաժամկետ կատարելու պարտավորությունը, եթե համապատասխան պայմանագրով այն արգելված չէ:

Հոդված 12. Կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը

1. Կառավարության պարտքի կառավարման ռազմավարական եռամյա ծրագիրը ներառվում է պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմում:

2. Կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագիրը ներառում է կառավարության պարտքի ուղենշային ցուցանիշները և հնարավոր ռիսկերի գնահատականը:

Գ Լ Ո Ւ Խ IV

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 13. Պետական պարտքի և Հայաստանի Հանրապետության համախառն արտաքին պարտքի հրապարակայնությունը

1. Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության կազմում ներկայացնում է տեղեկատվություն՝ պետական պարտքի և ընթացիկ պարտավորության վերաբերյալ:

2. Հայաստանի Հանրապետության համախառն արտաքին պարտքի վիճակագրության վարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գ Լ Ո Ւ Խ V

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

Հոդված 14. Ներքին պետական պարտքի աղբյուրները

Ներքին պետական պարտքի աղբյուրներն են՝

1) ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական և արտարժույթով թողարկված պարտատոմսերը.

2) ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կառավարությանը տրամադրված փոխառությունները և վարկերը.

3) ներքին պետական երաշխիքները:

Հոդված 15. Ներքին պետական պարտքի մարումը

1. Ներքին պետական պարտքը համարվում է մարված, եթե կատարվել են պայմանագրերով նախատեսված բոլոր պայմանները, կամ վճարման պարտավորությունը դադարել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պարտավորության դադարման այլ հիմքերով:

2. Շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի թողարկման պայմաններում փոփոխություններն արգելվում են:

Հոդված 16. Ռեզիդենտների կողմից կառավարությանը տրվող փոխառու միջոցները

1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներից փոխառությունների և վարկերի ստացումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

2. Հայաստանի Հանրապետության անունից ռեզիդենտների հետ փոխառության կամ վարկային պայմանագիր կնքելու իրավասություն ունի միայն լիազոր մարմինը:

3. Բացառությամբ պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումների, ռեզիդենտներից կարող են ներգրավվել փոխառու միջոցներ (փոխառություններ և վարկեր)՝ նույն ժամկետայնության պետական գանձապետական պարտատոմսերի նախորդ 3 ամիսների առաջնային տեղաբաշխումների ընթացքում ձևավորված միջին կշռված եկամտաբերությունից ոչ բարձր տոկոսադրույքով:

Հոդված 17. Պետական գանձապետական պարտատոմսերի թողարկումը

1. Հայաստանի Հանրապետության անունից պետական գանձապետական պարտատոմսեր թողարկելու բացառիկ իրավունքը պատկանում է լիազոր մարմնին:

2. Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, հետգնման և մարման կարգերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(17-րդ հոդվածը լրաց. 28.09.16 ՀՕ-152-Ն)

Հոդված 18. Պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների ընտրությունը

1. Լիազոր մարմինը սահմանում է պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների վարքագծի գնահատման և ընտրության կարգը և դրան համապատասխան ընտրում է առաջնային շուկայի մասնակիցներին: Լիազոր մարմինն ապահովում է պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների վարքագծի գնահատման և ընտրության չափանիշների հրապարակայնությունը:

2. Կենտրոնական բանկը լիազոր մարմնին տրամադրում է պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի մասնակիցների կողմից օրենքների և այլ իրավական ակտերի հիման վրա Կենտրոնական բանկին տրամադրված պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների ընտրության չափանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվություն: Լիազոր մարմնին տրամադրվող այդ տեղեկատվությունը չի կարող պարունակել բանկային գաղտնիք:

(18-րդ հոդվածը խմբ. 28.09.16 ՀՕ-152-Ն)

ԳԼՈՒԽ VI

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

Հոդված 19. Արտաքին պետական պարտքը

1. Արտաքին պետական պարտք ներգրավելու վերաբերյալ պայմանագրերը կնքվում են լիազոր մարմնի համաձայնությամբ: Լիազոր մարմնի համաձայնությունը տրվում է՝ հիմք ընդունելով պայմանագրի համապատասխանությունը կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրին:

Հոդված 20. Արտաքին պետական պարտքի աղբյուրները

1. Արտաքին պետական պարտքի աղբյուրներն են՝
1) օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից, վարկավորող բազմակողմ հաստատություններից փոխառությունները և վարկերը.
2) ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից փոխառությունները և վարկերը.
3) ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական և արտարժույթով թողարկված պարտատոմսերը.
4) արտաքին պետական երաշխիքները:

Հոդված 21. Արտաքին պետական պարտքի մարումը

1. Արտաքին պետական պարտքը համարվում է մարված, եթե կատարվել են համապատասխան պայմանագրերով նախատեսված բոլոր վճարումները, կամ վճարման պարտավորությունը դադարել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև պայմանագրով նախատեսված պարտավորության դադարման այլ հիմքերով:

ԳԼՈՒԽ VII

ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

Հոդված 22. Ներքին և արտաքին պետական երաշխիքները

1. Ներքին պետական երաշխիքները Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին տրամադրված բյուջետային երաշխիքներն են:
2. Արտաքին պետական երաշխիքները ոչ ռեզիդենտներին և օտարերկրյա պետություններին Հայաստանի Հանրապետության և Կենտրոնական բանկի կողմից տրամադրված պետական երաշխիքներն են:
3. Եթե միևնույն պարտավորության համար միաժամանակ երաշխիք են տրամադրել կառավարությունը և Կենտրոնական բանկը, ապա պետական պարտքի կազմում հաշվառվում է դրանցից մեկը (առավելագույնը):

Հոդված 23. Կառավարության կողմից պետական երաշխիքների տրամադրումը

1. Պետական երաշխիքներ կարող են տրամադրվել լիազոր մարմնի դրական եզրակացության հիման վրա՝ հիմք ընդունելով համապատասխանությունը կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրին:
2. Համայնքների համար պետական երաշխիքների տրամադրման դեպքերը և կարգը սահմանում է կառավարությունը:
3. Բյուջետային երաշխիքներ կարող են տրամադրվել Հայաստանի Հանրապետության այն ռեզիդենտ իրավաբանական անձանց համար, որոնք ներկայացնում են կառավարության տնտեսական ծրագրերից բխող նպատակային ծրագրի կատարման համար անհրաժեշտ և վարկի տեսքով պահանջվող գումարների հիմնավորում, որը պետք է ներառի, մասնավորապես, ծրագրի իրավական հիմքը, բովանդակությունը, խնդիրներն ու նպատակը, կատարման փուլերը և ժամկետները, վարկի վերադարձելիության ու օգտագործման դիմաց հաշվարկվող տոկոսների վճարման հնարավորության հիմնավորումը, ինչպես նաև վարկի մարման ժամանակացույցը, ծրագրի նախահաշիվը և ծախսերը հիմնավորող հաշվարկները:

4. Պետական երաշխիքի գումարը երաշխիքի ստացման համար դիմելու պահին չպետք է գերազանցի երաշխիք ստացողի ակտիվների 20 տոկոսը:

Սույն սահմանափակումը կիրառելի չէ, եթե՝

1) երաշխիքով ներգրավվող վարկային միջոցները օգտագործվելու են պետական կարիքների, ներառյալ՝ պետական պահուստի կարիքների համար գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ֆինանսավորման համար.

2) երաշխիքը տրամադրվում է տնտեսական ճգնաժամային իրավիճակներում պետության ռազմավարական խնդիրները լուծելուն ուղղված ծրագրերին ֆինանսավորում ապահովելու համար՝ վարկատուների կողմից այլ ապահովության միջոցներ չընդունելու դեպքում:

5. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնց համար տրամադրվել են բյուջետային երաշխիքներ, երաշխիքային ծրագրի ավարտից հետո պետական բյուջե պետք է վճարեն միջնորդավճար՝ երաշխիքային գումարի 1 տոկոսի չափով:

6. Լիազոր մարմինն իրավասու է մինչև վարկի մարելը բյուջետային երաշխիքի տրամադրման պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով ստուգելու ստացողի ֆինանսական վիճակը:

7. Բյուջետային երաշխիքներ ստացող տնտեսական ոլորտների առաջնահերթությունը սահմանվում է կառավարության տնտեսական զարգացման ծրագրերով և արտացոլվում է կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրում:

8. Կառավարության կողմից Կենտրոնական բանկի համար տրամադրված արտաքին պետական երաշխիքը հաշվառվում է որպես Կենտրոնական բանկի պարտք:

9. Որոշակի պահի դրությամբ տրամադրված և չմարված պետական երաշխիքների հանրագումարը չպետք է գերազանցի նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 20 տոկոսը:

(23-րդ հոդվածը լրաց. 26.12.08 ՀՕ-4-Ն)

Գ Լ ՈՒ Խ VIII

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 24. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ծագած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

2008 թ. հունիսի 18
Երևան
ՀՕ-78-Ն